



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1044 - Ա
քաղ. Երևան

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԵՐ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 07/80-2/18089-14 և հոկտեմբերի 25-ի N 06/3-3/18291-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 02/7909-14 և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 01/3.1/5077-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 52,110 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Մշակութային քաղաքներ՝ կամավորների ուժերով» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված ավտոմեքենան («KIA SORENTO» մակնիշի 2011 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 5XYKT3A14BG024081, 7,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի ու Արագածոտնի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ